

ԺԱՂԱԳՐԹԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ
ՅԵՎԱՆԻ
ԺԱՂԱԳՐԹԱԿԱՆ ԱԶԵԽԱԿՈՒՐ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Ա. ԱՐԵՎՈՒՆ,

ՀԱՅՑԱՅԻՆ
ԱՐԵՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԳՈԼՅԱԿՈՎԻ
ԿՐԻՎԴՐԱԿԱՆԻ

347
Ա-16

347
4-16

ԿԱՀ ՄԻԹԻԹՅԱՆ ԱՐԴՅՈՂԿՈՒՄԱՏԻ ԻՐԱՎԱԲՈՂԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

01 MAR 2010

=1 MAR 2010

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱ-
ԿԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ | Արմ
2-5731a

Ա. Ն. ԱԲՐԱՄՈՎ

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԻՄՈՒԹՅՈՒՆ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՔ

ԻԻԲ. № 15001.

ՀՐԱՄԱՐԿԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՀ ԱՐԴՅՈՂԿՈՒՄԱՏԻ
ՑԵՐԵՎԱՆ ● 1940



Վերջին ժամանակները զատական որդանները համալրվել են ժաղովագական դատավորների և ժողովրդական ատենակալաների նոր կողմանով, վորոնք դեռևս բավարար չափով ծանոթ չեն խորհրդային որենությանն ու չունեն զատական աշխատանքի անհրաժեշտ փորձ։ Այդ ընկերներին ողնություն ե պետք, վորագույն նրանք արագ կերպով կարողանան տիրապետել զործին, ընդունելուն զատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմանը զատարանի առաջ դրված խնդիրներում։

«Ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի դրադարան»-ի լույսնածայումը զդալի չափով կլրացնի արդարադատության մարմինների իրավաբանական հանրամատչելի զրականության բացը և եյական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական զատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց գործնական աշխատանքում։

Գրադարանը բազկացած ե քրեական և քաղաքացիական իրավունքի, զատական իրավանքի առանձին հարցերին և ժողովրդական զատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի շարք գրքեր։

Իրավաբանական հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին լույս ընծայվող զրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու գիտողությունները ուղարկել հրատարակչության։



39855-69

ԳԼՈՒԽ

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վորագույն կանոն, քաղաքացիական իրավունքները խախտվելու դեպքում պաշտպանվում են զատական կարգով։

ԱԽՖՍՀ Քաղ. Որ. 2 հոդվածը (և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որենսդրքերի համապատասխան հոդվածները) սահմանում է, վոր՝ «Քաղաքացիական իրավունքի վերաբերյալ վեճերը լուծվում են զատական կարգով։ Դատարանին դիմելու իրավունքից հրաժարվելու անվավեր է»։

Քաղաքացիների անձնական ու գույքային իրավունքների և շահերի զատական պաշտպանությունը, ինչպես նաև պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնահությունների, կոսոպերատորի և այլ հասարակական կազմակերպությունների իրավունքների և որենքով պահպանվող շահերի զատական պաշտպանությունը, իրագործվում և չայց հարուցելու միջոցով։

Եահաղբոված անձը հայց կարող է հարուցել վոչ միայն այն ժամանակ, յերբ նա իր իրավունքները խախտված է համարում, այլ և այն դեպքերում, յերբ նա շահագրգըռված ե իր վորոշ իրավունքների առկայությունը կամ դրանց բացակայությունը զատարանի միջոցով հաստատելու մեջ։ Որինակ, հայրությունը հաստատելու վերաբերյալ հայցը, փաստական ամուսնական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հայցը—սրանք կլինեն վորոշ իրավունքների առկայությունը հաստատող հայցեր, իսկ կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցը կլինի

պահանջ պայմանագրից բղխող իրավունքների և պարտականությունների բացակայությունը դատարանի կողմից ճանաչելու մասին:

Հայցային վաղեմություն կոչվում է այն ժամկետը, վորի ընթացքում կարող ե տեղի ունենալ իրավունքների իրադրումը, այդ թվում և նրանց հարկադրական իրադրումը դատարանի միջոցով:

Հայցային վաղեմությունից պետք է տարբերել ձեռքբերման (приобретательного) վաղեմությունը: Ձեռք բերման վաղեմություն կոչում են որենքով վորոշված ժամանակամիջոցի լրանալը, վորի հետևանքով՝ ձեռք և բերվում վորեւ իրավունք, որինակ, վորոշ ժամանակի ընթացքում ուրիշ գույքին տիրապետող անձը սեփականության իրավունք և ձեռք բերում այդ գույքի նկատմամբ:

Ձեռքբերման վաղեմություն մեր որենսդրությունը չի ընդունում: Ծիծ՛ Քաղ. Որենսդրքի 44 հոդվածը և ընդունում միութենական հանրապետությունների Քաղ. որենսդրությունների համապատասխան հոդվածները սահմանում են, վոր Հայց Հարուցելու իրավունքը, այսինքն՝ դատարանի միջոցով իրավունքի հարկադրական իրադրումը պահանջելու իրավունքը, մարդում և որենքում նշված ժամկետն անցնելուց հետո, այսինքն՝ Հայցային վաղեմությունը լրանալուց հետո: Որենքն այդ կանոնը սահմանում է հոգուտ քաղաքացիական իրավունքների օրատչած պահպանության և անձնական ու գույքային իրավահարաբերությունների մեջ վորոշակիություն ու կարդ ապահովելու համար:

Յեթե յերկար ժամանակ Հայցը չի հարուցվել, ապա կարող և անհնար գտննալ, կամ վերին աստիճանի դժվար լինել առաջադրված պահանջները Հիմնավորելու համար աղացույցներ ներկայացնելը կամ առաջադրված պահանջների գեմ առարկություններ անելը: Յեկ իրոք, վոր վկաները կարող են մեռնել, բացակայել անհայտ հասցեյով, կամ մոռանալ այն հանդամանքները, վորոնք պետք ե պարզվեն, փաստաթղթերը կարող են կորցվել, վոչնչացվել և այլն: Այդ ամենը դժվարացնում կամ բոլորովին անհնար ժամկետի մեջ վորովնում կողմերի իսկական փոխարարերությունների մեջ վորոշակիություն ու կարդ ապահովելու համար:

Պարզելը և դրանով նաև դժվարացնում Հիմնավորված վճիռ կայացնելը:

Յեթե վիճելի իրավունքը յերկար ժամանակ չի իրագործվել, ապա միանդամայն ընական կլիներ յենթադրել, վոր այդ իրավունքը կամ ընդհանրապես չի ծագել, կամ թե չեն նա կորցրել ե իր արժեքը դատական պաշտպանության իրավունք ունեցող անձնավորության համար:

Բացի այդ, Հայցային վաղեմությունը սահմանվում է նաև նրա համար, վոր չի կարելի գոյություն ունեցող գրությունը, գոյություն ունեցող փաստական հարաբերություններն անորոշ ժամանակով թողնել նրանց հարկադրական փոփոխության կամ լիկվիդացիայի հնարավորության սպառնալիքի տակ:

Մեր սոցիալիստական տնտեսությունը պլանային տնտեսություն ե, վորի չնորհիլ ամեն մի ձեռնարկություն, ամեն մի կազմակերպություն իր տնտեսությունը վարում է վորոշ պլանով: Բավական յերկար ժամանակ իրենց հարաբերություններն ուրիշ ձեռնարկությունների կամ կազմակերպությունների հետ անորոշ գրության մեջ թողնելը պլանի կազմալուծում առաջ կրերեր: Որինակ, հնարավոր չե, վոր ձեռնարկությունը յերկար ժամանակ անտեղյակ մնա այն պահանջների մասին, վորոնք կարող են առաջադրվել նրան, իր մատակարարած արտադրանքի առթիվ, նրա վորակի մասին և այլն: Նման գրությունը ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատանքի մեջ կմտցներ անկայունություն, անորոշություն:

Յուրաքանչյուր քաղաքացի ևս իր գոյության նյութական պայմանները կառուցում ե վորոշ հաշվով: Յերկարամե ժամանակի ընթացքում պահանջներ առաջադրելու հանրավարությունը և նրանց հարկադրական կատարումը կիսամետեր առանձին քաղաքացիների կենցաղային հաշիվները: Անդամ այն դեպքերում, յերբ այս կամ այն անձի, այս կամ այն պահանջի որինականությունը կասկած անդամ չի առաջ բերում, կամ նույնիսկ հաստատված ե որինական ուժի մեջ ժաման դատական վճույվ, այդ իրավունքը պետք ե իրագործվի որենքով սահմանված ժամկետի ընթացքում, վորովհետեւ նրա չիրականացնելը հիմք ե տալիս յենթադրելու,

վոր նա կորցրել ե իր նշանակությունը և հետաքրքրությունը իրավագոր անձի համար։ Դրա համար ել որենքը վորուշակի ժամկետ ե սահմանում նաև դատական վճիռների կատարման համար։ Յեթե դատական վճիռն որենքով սահմանված ժամկետի ընթացքում չի կատարված, ապա նա կորցնում ե իր ուժը և չի կարող կատարվել։

Հայցային վաղեմությունը կիրավովում ե բոլոր քաղաքացիական իրավունքների նկատմամբ, յեթե որենքով հակառակը չի սահմանված, կամ յեթե համապատասխան իրավունքի բուն եյությունից բղխում ե հայցային վաղեմության կիրառման անհնարինությունը։

Հայցային վաղեմությունը պետական սեփականության նկատմամբ անկիրառելի յէ։ Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր պետությունը վաղեմության հետևանքով չի կարող կորցնել իր ունեցած հայցի իրավունքն այն իրերին կատմամբ, վորով կարող են պատկանել միայն պետությանը։ Ինչ վերաբերում ե այլ գույքի պետական սեփականությանը, վորը կարող ե լինել քաղաքացիական շրջանառության այլ ժամակիցների սեփականություն, ապա դատական պրակտիկան ընդունել ե, վոր նաև այլ գույքի նկատմամբ, վաղեմության հետևանքով, պետությունը չի կորցնում իր հայցի իրավունքը (ՌԽՖՍՀ Գերազույն Դատարանի 1925 թ. Հունիսի 29-ի պլենումի վորոշումը—ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 44 հոդվածի լրացումը)։

Տիրապուրի գույքը, այսինքն՝ այն գույքը, վորի սեփականատերն անհայտ ե, կամ վորը սեփականատեր չունի, զառնում ե պետության սեփականություն (ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 68 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածները)։ Այդ հիման վրա դատական պրակտիկան հանդել ե այն յեզրակացության, վոր այնքան, վորքան մեզ մոտ գոյություն չունի ձեռքբերման վաղեմություն, հետևապես այն իրերը, վորոնց նկատմամբ սեփականատերը, հայցային վաղեմության ժամկետը լրանալու պատճառով, կորցրել ե հայցարուցելու իր իրավունքը, դառնում են պետության սեփականություն։

Հայցային վաղեմություն չի կիրառվում նաև ընտանեկան և անձնական մի քանի իրավունքների նկատմամբ։ Այսպես, որինակ, հայցային վաղեմությունը անկիրառելի յէ հայրությունը հաստատելու վերաբերյալ հայցերով, վոչ որենքի կամ դատարանի վորոշման հիման վրա յերեխան իր մոտ պահող յուրաքանչյուր անձնավորությունից նրան հետպահանջելու վերաբերյալ ծնողների հայցերով։

Այստեղ հշատակված են մի քանի դեպքեր, յերբ հայցային վաղեմությունն անկիրառելի յէ ըստ իրավունքի իր բովանդակության։ Որենքով չի սահմանված, թե հատկապես իրավունքի վո՞ր կատեղորիաների նկատմամբ ե անկիրառելի հայցային վաղեմությունը, դրա համար ել դատարանը ամեն մի առանձին դեպքում այդ հարցը պետք ե լուծի, յելնելով համապատասխան իրավունքի եյությունից։

ԳԼՈՒԽ II

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՅԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայցային վաղեմության ժամկետները։ Որենքը սահմանում է հայցային վաղեմության ընդհանուր հատուկ ժամկետներ։ Ընդհանուր ժամկետները տարածվում են բոլոր իրավահարաբերությունների վրա, յեթե որենքով հատուկ ժամկետ չի սահմանված։

Որենքով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետների յերկու տեսակ ե սահմանված (ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 44 և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածները)։

ա) այն վեճերի համար, վորտեղ թեկուղ կողմերից մեկը համդիսանում ե առանձին քաղաքացի (Փիղիկական անձ), սահմանված ե յերեք տարվա ժամկետ (ՌԽՖՍՀ-ուժ՝ մեկ տարվա ժամկետ)։

բ) սոցիալիստական տնտեսության կաղմակերպությունների (պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, կոոպերատիվ և այլ հասարա-

կական կազմակերպությունների) միջև ծագող վեճերով սահմանված ե մեկ և կես տարիվա ժամկետ:

Հայցային վաղեմության հատուկ ժամկետները սահմանված են միութենական հանրապետությունների քաղ. որ. առանձին հոգվածներում և առանձին որենսդրական ակտերում: Այդ բոլոր ժամկետները թվելը չափազանց դբժգար ե, ուստի բավականանք միայն հայցային վաղեմության այն հատուկ ժամկետները նշելով, վորոնք սահմանված են դատական պրակտիկայում ամենից հաճախ հանդիպող իրավահարաբերությունների համար:

ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 44 և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոգվածների համաձայն, պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, կոռուկերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների միջև ծագող վեճերի համար սահմանված ե հայցային վաղեմության վեցամսյա ժամկետ՝ ա) անհամապատասխան վորակի ապրանքներ հանձնելուց բղխող պահանջների համար. բ) տուղանքներ, տուժեր և տուժանքներ դանձելու վերաբերյալ բոլոր պահանջների համար. գ) յերկաթուղային, ջրային և ողաջին փոխադրումների պայմանագրերից բղխող պահանջների, ինչպես նաև կազի մարմինների դեմ հարուցած այն պահանջների համար, վորոնք բղխում են նրանց զործունեյության հետ կապված ոպերացիաներից:

Խտուր փոխադրումների պայմանագրից բղխող պահանջների համար (յերկաթուղա-ջրային, յերկաթուղա-ջրային-ոդային) սահմանված ե հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետ:

Ծովային փոխադրումների պայմանագրից բղխող պահանջների համար հայցային վաղեմության հատուկ ժամկետը են տահմանված (Առևտրական ծովագնացության որենսդրի 241 հոգվածը—Որ. Ժող. № 41, 1929 թ. Հոդ. 366):

ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 404 հոգվածը հայցային վաղեմության տարիվա ժամկետը սահմանվության յերկու տարիվա ժամկետ է սահմանում բարձրացված վահանգության աղբյուրից (источником повышеною

опасности) անձին կամ դույքին պատճառած վնասների առթիվ պետական որդանին պահանջներ առաջադրելու համար (Ուկր.ԽՍՀ Ուղղեկական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ և ԲԿԽՀ քաղ. որենսդրքի համապատասխան հոգվածները հայցային վաղեմության մեկ տարիվա ժամկետ են սահմանում):

ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 430 հոգվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոգվածները, ժամանդական դույքի գտնվելու վայրից բացակայող ժամանդական կողմից ժամանդությունն ընդունելու համար, սահմանում են վեցամսյա ժամկետ, իսկ չնեղերի նկատմամբ՝ մեկ տարիվա ժամկետ: Վաճառողի կողմից խաբերայությունն ուղարկում տարրության յերեք տարվա ժամկետ: Յերկու դեպքում ել որենքը թույլ ե տալիս պայմանագրով ալելի յերկարատև ժամկետներ սահմանել:

ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 197 հոգվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոգվածները, գնված դույքի պակասությունների առթիվ գնորդի կողմից վաճառողին պահանջներ առաջադրելու համար՝ սահմանում են վեցամսյա ժամկետ, իսկ չնեղերի նկատմամբ՝ մեկ տարիվա ժամկետ: Վաճառողի կողմից խաբերայությունն ուղարկում տարրության յերեք տարվա ժամկետ: Յերկու դեպքում ել որենքը թույլ ե տալիս պայմանագրով ալելի յերկարատև ժամկետներ սահմանել:

ՌԽՖՍՀ և Վրացական ԽՍՀ Քաղ. Որ. 396 հոգվածը սահմանում է, վոր ապահովագրության պայմանագրից բղխող բոլոր պահանջները վաղեմությամբ մարվում են յերկու տարվա ժամանակամիջոցում (ՈւԽՍՀ-ում տարածվում են այդ հանրապետությունում սահմանված վաղեմության ընդհանուր ժամկետները):

Յերաշխալորի դեմ հայց հարուցելու համար ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 250 հոգվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոգվածները սահմանում են յերեք ամսյա ժամկետ այն որից հաշված, յերբ հիմնական պարտապանը պետք է, կատարի պարտքի վճարումը, կամ այն պարտավորությունները, վորոնց համար սահմանված է յեղել յերաշխալորությունը: Այն դեպքերում, յերբ պարտքի վճարման կամ պարտավորության կատարման ժամկետը չի մատնանշված, յերաշխալորի դեմ հայց կարող ե հարուցվել. յերաշխալո-

րության պայմանագիրը կնքելու որդվանից մեկ տարվա ընթացքում, յեթե յերաշխավորության պայմանագրում այլ ժամկետ չի սահմանված:

ՌԽՖՍՀ Աշխորենսգրքի 93¹ հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների աշխորենսգրքերի համապատասխան հոդվածների համաձայն, աշխատանքային դորձերով յեղած վեճերի վրա հայցային վաղեմության յերեք տարվա ընդհանուր ժամկետը չի տարածվում: Այդ ժեճերի համար տահմանված են հատուկ ժամկետներ՝

ա) աշխատանքից աղատելու հարցերով և աշխատավարձից սխալ պահումներ կատարելու վերաբերյալ վեճերի համար—14 որ.

բ) արտաժամյա աշխատանքների վարձատրության վերաբերյալ դորձերով—մեկ ամիս.

գ) բոլոր մնացած հարցերով—յերեք ամիս (ՌԽՖՍՀ Աշխորենսգրքի 93² հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների աշխորենսգրքերի համապատասխան հոդվածները. տես նաև ԽՍՀՄ Աշխաժողկոմատի կողմից 1928 թվի գելտեմբերի 12-ին հաստափած ԳԿՀ-ների վերաբերյալ կանոնադրությունը):

Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների միջև ծագող աշխատերի վերաբերյալ վեճերով ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿՍ 1937 թ. հունիսի 26-ի վորոշամբ՝ սահմանված է հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետ (Որ. Փող. 1937 թ. № 47, հոդ. 194):

ՌԽՖՍՀ Ամուսնության, բնտանիքի և ինամակալության որենսգրքի 29 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների որենսգրքերի համապատասխան հոդվածները հայրությունը դատարանում վիճարկելու համար սահմանում են մեկ տարվա ժամկետ, յեթե յերեխայի հայրության անձն առարկություններ ե արել քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում:

Պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կուտանտեսությունների, կոոպերատիվ և այլ հատարակական կազմակերպությունների միջև ծագող վեճերի վերաբերյալ դատական վճիռներն ու արբիտրաժի վորոշումները կատար-

ման ներկայացնելու համար սահմանված ե մեկ տարվա ժամկետ, իսկ մնացած բոլոր վեճերի վերաբերյալ դատական վճիռները կատարման ներկայացնելու համար՝ յերեք տարվա ժամկետ (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 255¹ հոդվածը). Ուկի Աշխատությունը վեճերի վերաբերյալ սահմանված ե մեկ տարվա ժամկետ:

Հայցային վաղեմության ժամկետներ հաշվելը: Հայցային վաղեմության ժամկետներ հաշվելու կապակցությամբ յերկու հարց ե ծագում:

ա) վո՞ր մոմենտից ե սկսվում հայցային վաղեմության ժամկետը կամ վո՞ր մոմենտից ե վաղեմությունն ընթանում ե թ ինչպես հաշվել այդ ժամկետները:

Առաջին հարցի առթիվ ընդհանուր ցուցում կա ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 45 հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. Համապատասխան հոդվածներում: Այդ հոդվածների համաձայն, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այն ժամանակից, յերբ ծագում է հայց հարուցելու իրավունքը: Սակայն, այդ ընդհանուր դրությունը կոնկրետացնելիս, դժվար է միատեսակ վորեե պատսխան տալ բոլոր քաղաքացիական իրավահարաբերությունների համար: Եայսծ համապատասխան քաղաքացիական իրավունքների ելությանը, հայց հարուցելու իրավունքի ծաղման մոմենտի հարցը լուծվում է տարբեր ձևերով, մի քանի դեպքերում այդ հարցը լուծվում է համապատասխան որենքով:

Բայց և այնպես կարելի յե մատնանշել մի քանի ընդհանուր կանոններ: Հայց հարուցելու իրավունքը միշտ ծագում է այն պահին, յերբ շահագրգուպած անձն անկախ և հակառակ պարտապանի կամքին, կարող է դիմել իր իրավունքի իրավորձմանը: Այսպես, սեփականության իրավունք ունեցող անձնավորության համար հայց հարուցելու իրավունքը ծագում է այն մոմենտին, յերբ այդ իրավունքը խախտված է վորեե մեկի կողմից: Մինչեւ այն ժամանակը, յերբ վոչ վոչ չի խախտել սեփականության իրավունքը, սեփականատերը վոչ մի հիմք չունի դիմելու իր իրավունքի հարկադրական իրազորձմանը: Այն մոմենտից, յերբ

վորին մեկը խախտում է նրա սեփականության իրավունքը, անհրաժեշտություն է առաջանում հարկադրաբար իրադործելու իր իրավունքը, նա հայց հարուցելու իրավունք և ստանում իր սեփականության իրավունքը խախտողի նկատմամբ: Որինակ՝ յեթե քաղաքացի Ա.-ն յուրացրել է մի իր, վորը պատկանում է նրա հետ նույն բնակարանում ազգականին, ապա վերջինս իրավունքը ունի քաղ. Ա.-ի գեմ այդ իրը հետ վերցնելու մասին հայց ներկայացնելու, յերեք տարվա ընթացքում, հաշված այն մոմենտից, յերբ քաղ. Ա.-ն տիրապետել է այդ իրին:

Մինույն ձեռվ է լուծվում հարցը նաև հեղինակի, զյուտարարի և մյուսների իրավունքը խախտվելու դեպքում: Որինակ, մի քաղաքացի գիտական աշխատություն է գրել և իր աշխատության ձեռադիրը, յեղբակացություն տալու համար, հանձնել է գիտա-հետազոտական խոտառութին, իսկ վերջինս առանց հեղինակի համաձայնության, այդ աշխատությունը տպագրել է ինստիտուտի կողմէց հրատարակվող ժողովածուի մեջ, առանց հիշատակելու հեղինակի պայմաննը: Այն մոմենտից, յերբ լույս է տեսել ժողովածուն, հեղինակն իրավունք ունի հայց հարուցելու ինստիտուտի ղեմ՝ հեղինակի խախտված իրավունքը վերականգնելու, տվյալ աշխատության հեղինակի ազգանունը մամուլում հրապարակելու մասին:

Հարցն այլ կերպ է լուծվում, յերբ խոսքը վերաբերում է պարտավորական իրավունքներին, ընդվորում, պետք է տարբերել վորեն գործողություն կատարելու վերաբերյալ պարտավորությունը (որինակ, պարտօք վճարել, իրը հանձնել և այլն) վորեն գործողությունից ձեռնորահ մնալու վերաբերյալ պարտավորությունից (որինակ, մեկ տան մեջ ապրող յերկու քաղաքացիների համաձայնությունը, վորը պարտավորեցնում է նրանցից մեկին՝ չողովելու տան գըշխավոր մուտքից):

Ծիծեակ Քաղ. Որ. 111 հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածների համաձայն, պարտավորությունը պետք է կատարվի որենքում կամ պայմանադրի մեջ նշված ժամկետին:

Յեթե կատարման ժամկետը չի նշված վոչ որենքի, վոչ պայմանադրի մեջ, ապա պարտաւունքն իրավունք ունի պահանջելու պարտավորության կատարումը նրա ծագելուց անմիջապես հետո, իսկ պարտապահը պարտավոր է անհատապ կատարել իր վրա վերցրած պարտավորությունը:

Վորեւ գործողություն կատարելու վերաբերյալ պարտավորության համաձայն, յերբ նշված է լինում կատարման ժամկետը, հայց հարուցելու իրավունքը ծագում է ժամկետն սկսվելու և պարտապահնի կողմից իր պարտավորությունը չկատարելու մոմենտից, որինակ, բնակարանի վարձակալը պարտավորվել է բնակարանի վետրվար ամսավագարձը մուծել մարտի 10-ից վոչ ուշ, հետեւապես, բնակարանի վարձը գանձելու վերաբերյալ հայց հարուցելու իրավունքը բնականավարչության համար ծագել է միայն մարտի 11-ից:

Այն գեպերում, յերբ պարտավորության կատարման ժամկետն որենքով չի սահմանված ու չի նշված պայմանադրի մեջ, հայց հարուցելու իրավունքը ծագում է պարտավորության ծագման մոմենտին, որինակ, յեթե քաղ. Ա.-ի քաղ. Բ.-ին փոխարինաբար 50 ոուրլի յէ տվել առանց նշելու վճարման ժամկետը, ապա քաղ. Ա.-ի հայցի իրավունքը ծագում է այն մոմենտից, յերբ քաղ. Բ.-ն սուացել է զբարմը:

Յեթե պարտավորությունը նախատեսում է վորոչ գործողությունից ձեռնապահ մնալը, ապա մինչեւ այն ժամանակ, քանի զեռ պարտապահնը չի խախտել իր պարտավորությունը, պարտաւորը կարիք և հիմք չունի զիմելու հարկադրական միջոցների, իր իրավունքը հարկադրական իրավորմանը, հետեւապես նրա համար հայց հարուցելու իրավունք դեռևս չի ծագում: Այդ իրավունքը ծագում է միայն այն մոմենտից, յերբ պարտապահնը կխախտի իր պարտավորությունը, յեթե դիմելու լինենք վերը հիշված որինակին, ապա այն մոմենտից, յերբ զլխավոր մուտքից չափովելու մասին պարտավորություն ստանձնած անձնագրությունը կխախտի այդ պարտավորությունը:

Պարբերական վճարումների վերաբերյալ պարտավորու-

թյունների մեջ հայցի իրավունքը ծագում է ամեն մի առանձին հերթական վճարման նկատմամբ, ալիմենտի դործերով հայցի իրավունքը ծագում է ամեն ամիս:

Մի քանի գեղքերում որենքը վորոշ մոմենտ է սահմանում, վորից սկսած ծագում է հայցի իրավունքը, հետևապես և այն մոմենտը, վորից սկսվում է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Այսպես, ԽիջԾԱՀ Քաղ. Որ. 45 և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հողվածների համաձայն, պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կողմնահանությունների, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների միջև վոչ պատշաճ վորակի ապրանք մատակարարելուց պահանջների համար բարեկարգ հայցի իրավունքը ծագում է, հետևապես և հայցային վաղեմության ընթացքն սկսվում է, հանձնված ապրանքի վոչ պատշաճ վորակի մասին ակտ կազմելու որից:

ԽիջԾԱՀ Քաղ. Որ. 404 և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հողվածների հիման վրա, պատճառած վնասը հատուցելու մասին պետության մարմինների ղեմ հարուցված հայցերով հայցին վաղեմությունը հաշվում է վնասը պատճառելու որից:

Աշխատանքային վեճերի համար (Աշխորենսդրքի 93^o հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների աշխորենսդրքերի համապատասխան հողվածները) հայցի իրավունքը ծագում է՝

ա) այն զործերով, վորոնցով շահագրգումած կողմը աշխատանքից աղատվելու դեպքերում, առանց նախապես Գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովին դիմելու, անմիջականորեն դիմում և դատարանին՝ աշխատողին հաշվարկ ներկայացնելու մոմենտից, մնացած բոլոր դեպքերում՝ համապատասխան հաշվարկ կատարելու կամ վարձատրման մասին մերժում պատճառու որից, կամ այն որից, յերբ կտարկվել են դանդատարկվող դործողությունները.

բ) պարտադիր կերպով ԳԿՀ-ի քննությանը յենթակա դործերով, ինչպես նաև այն զործերով, վորոնցով ԳԿՀ-ին

դիմելը պարտադիր չե, բայց վորոնք շահագրգումած աշխատողի ցանկությամբ քննված են յեղել նրա կողմից՝ այն որից, յերբ աշխատողը տեղեկություն է ստանում, վոր ԳԿՀ-ի վճիռը չի կայացել, կամ ԳԿՀ-ի վճիռը հսկողության կարգով վերացվելու մասին աշխատողի կողմից տեղեկություն ստանալու որից:

Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների միջև աշխատերի վերաբերյալ ծագած վեճերի համար հայցային վաղեմության ժամկետը հաշվում է տվյալ կոլտնտեսությունում յեկամուտները փաստորեն բաշխելու մոմենտից (ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. հունիսի 26-ի վորոշումը, Որ. Փող. 1939 թ. № 47, հոդ. 191):

Փայտավճարը վերադարձնելու մասին նախկին կոլտընտեսականի (կոլտնտեսությունից գուրու յեկամ կամ հեռացված) հայցի իրավունքը ծագում է ընթացիկ տարվա յեկամուտները բաշխելու համար չողդողկոմատի կողմից սահմանված որից:

Յերկաթուղային վոխագրումներից ծաղող վեճերի համար հայցի իրավունքը ծագում է յերկաթուղուն ներկայացրած պահանջը մերժելու մասին պատասխան ստանալու որից, կամ պահանջի առթիվ յերկաթուղու պատասխանի համար սահմանված ժամկետն անցնելու որից (ԽՍՀՄ յերկաթուղիների կանոնադրքի 96 և 97 հոդվածները):

Կատի մարմինների գեմ ուղղված պահանջների համար հայցի իրավունքը ծագում է փոստային առաջումը կամ փոխադրումը փոստին հանձնելու որից (ԽՍՀՄ փոստային, հեռագրական, հեռախոսային և ռադիոկապի կանոնադրքի 85 հոդվածը. Որ. Փող. 1929 թ. № 22, հոդ. 194):

Մենք թվեցինք վոչ բոլոր դեպքերը, յերբ որենքով սահմանվում է հայցի իրավունքը ծագման մոմենտը և դրանով իսկ՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը. մենք թվեցինք միայն դատական պրակտիկայում ամենից հաճախ հանդիպող դեպքերը:

Ինչ վերաբերում է հայցային վաղեմության ժամկետներ հաշվելու կանոններին, ապա ԽիջԾԱՀ Քաղ. Որ. և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. Որ.

իրենց մեջ այդպիսի կանոններ չեն պարունակում: Դատական պրակտիկայում, ըստ անալոգիայի, կիրառվում են ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. ՎI և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան դրույներով սահմանված դատավարական ժամկետներ հաշվելու կանոնները:

Ժամկետները հաշվվում են ամիսներով և որերով (ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. 54 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածները): Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է վերջին ամսի համապատասխան թվին: Յեթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջն ընկնում է այնպիսի ամսվա, փորը համապատասխան թիվը չունի, ապա նա յենթադրվում է այդ ամսվա վերջին որը (ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. 55 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածները): Թեև որենքը չի ել ճիշտապելում այնպիսի դեպքեր, յերբ ժամկետը հաշվվում է տարիներով, սակայն այդ կանոնը պետք է կիրառվի նաև այն ժամանակ, յերբ ժամկետը հաշվվում է տարիներով:

Յեթե ժամկետն որերով է հաշվվում, ապա այդ սկզբում և այն որման հաջորդ որվանից, վորից սկզբում է ժամկետի ընթացքը (ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. 56 հոդվածը և մյուս համապատասխան հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածները):

Յեթե ժամկետի վերջն ընկնում է նոյեմբերի 7 և 8, հունվարի 22, մայիսի 1 և 2 կամ հանդսայան որերին (վոչ աշխատանքային որերին), ապա ժամկետի վերջին որ է համարվում այդ որերին հաջորդող առաջին աշխատանքային որը (ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. 57 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածները):

Ժամկետի վերջին որը ակնում է մինչև դիշերված ժամի 12-ը: Սակայն Հայցալիմումը կարելի յէ դատարան տալ միայն մինչև աշխատանքն ավարտվելը դատարանում:

Ժամկետը բաց թողած չի համարվում, յեթե Հայցա-

լիմումը փոստին և հանձնվել մինչև ժամկետի լրանալը, թեկուղ և նա դատարանում ստացվի անդամ ժամկետը լրանալուց հետո: Դրա համար ել Հայցալիմումը ժամկետին որված է համարվում, յեթե նա փոստին և հանձնվել ժամկետի վերջին որը մինչև դիշերված ժամի 12-ը (ԲԽՄՍՀ Քաղ. Դատ. Որ. 58 և 59 հոդվածները և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածները):


ԳԼՈՒԽ III

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

39855-67

Իրավունքը կարող է իրագործվել վաղեմության ժամկետի ամերող տեսողության ընթացքում ցանկացած պահին, ճիշտ նույնպես ել այդ ժամկետի ցանկացած պահին կարող է հարուցվել և Հայցը: Սակայն պատահում են դեպքեր, յերբ այնպիսի հանդամանքներ են տեղի ունենում, վորոնք խանդարում են իրավունքի, մասնավորապես Հայց հարուցելու իրավունքի իրագործմանը: Այդ դեպքերում որենքը խոսում է Հայցի վաղեմության ընթացքը կասեցնելու մասին:

Հայց հարուցելու իրավունքի իրագործմանը խանդարող հանդամանքի հետևանքով հայցային վաղեմության ընթացքը կասեցնելու դեպքում այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում Հայց չի կարող հարուցվել, Հայցային վաղեմության ժամկետի մեջ չի հաշվադրվում. յեթե այն հանդամանքը, վորի հետևանքով կասեցվել է ժամկետը, վերանում է, ապա ժամկետի ընթացքը կրկնի շարունակում է: Այդպիսով, Հայցային վաղեմության յերեքամյա ժամկետ հաշվելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մինչև ժամկետի կասեցումն անցած ժամանակը, դումարելով դրան այն ժամանակամիջոցը, վորն անցել է Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսելու մոմենտից: Սակայն որենքը սահմանում է, վոր յեթե վաղեմության ժամկետի ընթացքի կասեցմանը հիմք ծառայող հանդամանքի վերացման որից մինչև Հայցային վաղեմության ժամկետի վերջը կեց ամիս պակաս և մասնաւոր մասնաւոր մասնաւոր ամսից յերեք ամսից:



ողակաս), ապա այդ ժամկետը յերկարացվում է մինչև վեց
ամիս (ՈւԽՍՀ-ում՝ մինչև յերեք ամիս):

ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 48 հոդվածը և մյուս միութենական
Հանրապետությունների քաղ. որ. Համապատասխան հոդ-
վածները սահմանում են, վոր հայցային վաղեմության ըն-
թացքը կասեցվում է՝

ա) յերբ հայցվորն անհաղթահարելի պատճառներով
զրկված ե յեղել հայց հարուցելու հնարավորությունից:
Անհաղթահարելի պատճառներ ասելով պետք ե հասկանալ
այնպիսի արգելքներ, վորոնք չեն կարող կանխվել վորեւ
հնարավոր միջոցներով, որինակ, յերկարժը կամ հեղե-
ղը, վորի հետևանքով ընդհատվել են հաղորդակցության
բոլոր ճանապարհները և հայցը չեր կարող հարուցվել, կամ
այն անձի ծանր հիվանդությունը, վորը պետք ե հայց հա-
րուցեր: Անհաղթահարելի պատճառի գործողությունն աղ-
դում և հայցային վաղեմության ժամկետի կասեցման վրա
միայն այն ժամանակ, յերբ այդ հանդամանքները առաջ են
յեկել վաղեմության ժամկետի վերջին վեց ամավա ընթաց-
քում (ՈւԽՍՀ-ում՝ յերեք ամիս): Իսկ յեթե այդ հանգա-
մանքներն սկսվել են առաջ և վերջացել հայցային վաղեմու-
թյան ժամկետի վերջին վեց ամիսներից առելի չուտ, ապա
նրանք վոչմի դեր չեն խաղում և չեն կասեցնում վաղեմության
ընթացքը, և միայն այն գեպքերում, յերբ հայց հարուցե-
լուն խանդարող հանդամանքներն սկսվել են թեկուց և վա-
գեմության ժամկետի վերջին կիսամյակից ամելի չուտ,
բայց վերջացել են վերջին կիսամյակում, անհաղթահարե-
լի պատճառը կասեցնում և հայցային վաղեմության ժամ-
կետի ընթացքը:

բ) յերբ պարտավորությունների համար մորատորիում
և հայտարարված: Մորատորիում կոչվում ե կառավարու-
թյան հատուկ վորոշմամբ հայտարարված՝ պարտավորու-
թյունների տարկետումք: Այդպիսի տարկետում կարող ե
հայտարարվել պետության ամբողջ տերիտորիայի, տերի-
տորիայի վորոշ մասի, վորոշ անձնավորությունների կամ
վորոշ պարտավորությունների համար.

գ) Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի և Ռազ-

մա-Ծովային Նավատորմի կազմի համար, յերբ նրանք
պատերազմական գրության մեջ են դանվում, քանի դեռ
վերջինս չարունակվում է:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

Հայցային վաղեմության ժամկետի կասեցումից հար-
կավոր ե տարբերել վաղեմության ժամկետի ընդհատումը:

Ինչպես արգելն հիշատակվեց վերը, հայցային վաղե-
մության ժամկետի ընթացքի կասեցման դեպքում, մինչև
կասեցումն անցած ժամանակամիջոցը չի կորցնում իր նշա-
նակությունը՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկե-
տը հաշվելու համար: Հայցային վաղեմության ժամկետն
ընդհատվելու դեպքում այն ժամանակամիջոցը, վորն ան-
ցել է մինչև ընդհատվելը, կորցնում ե իր նշանակությունը
հայցային վաղեմության ժամկետը հաշվելու համար: Ընդ-
հատման մոմենտից վաղեմության ժամկետն սկսվում է
նորից, իսկ այն ամբողջ ժամանակամիջոցը, վորն անցել է
մինչև ընդհատումը, կորցնում ե իր նշանակությունը և
զրա համար ել վաղեմության նոր ժամկետի մեջ չի հաշ-
վակցվում: Այդպիսով, բավական ե, մոր հայցային վաղե-
մության ժամկետն ընդհատվի, որինակ, այդ ժամկետի
վերջին որը, վոր այդ մոմենտից սկսվի հայցային վաղե-
մության ժամկետի նոր հաշվարկը (ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 50
և 51 հոդվածները և մյուս միութենական հանրապետու-
թյունների քաղ. որ. Համապատասխան հոդվածները):

Միութենական հանրապետությունների քաղ. որենս-
դրքերը հայցային վաղեմության ժամկետն ընդհատող
հանդամանքների շարքն են դասում հայց հարուցելու ու
պարտքի ընդունումը:

Հայցային վաղեմությունն ընդհատվում է հայցի հա-
րուցմանը: Հայցը դատարանում հարուցելու մոմենտից
մինչ այդ անցած ժամանակամիջոցը կորցնում ե իր նշանա-
կությունը, զրա համար ել հայցի վաղեմության ժամկետն

անցնելն արդեն գործը դատարանում քննելու մոմենտին վկչ մի նշանակություն չունի: Նմանապես նշանակություն չունի և այն հանդամենքը, վոր Հայցային վաղեմության ժամկետն անցել և դատարանի վճիռը բեկանվելուց հետո և մինչեւ նրա որինական ուժի մեջ մտնելը, կամ թե որինական ուժի մեջ մտած վճիռը հակողության կարգով բեկանվելուց հետո ժամկետն առաջին ատյանի դատարանում պատասխանողը չի կարող հիմնվել Հայցային վաղեմության ժամկետն անցած լինելու վրա:

Հայցը վոչ համապատասխան դատարանում հարուցելը, կամ զիմումն այլ պետական մարմնին կամ հասարակական կազմակերպությանը ներկայացնելը, յեթե տվյալ վեճը յենթակա յեւ դատարանի քննությանը, վորպես ընդհանուր կանոն, չի ընդհատում Հայցային վաղեմությունը: Սակայն, յեթե դատարանը հայցային զիմումն ընդունել է իր վարություն և հետադայում սպարզիլ է, վոր Հայցը հարուցվել և վոչ համապատասխան դատարանում, ասկա Հայցային վաղեմությունը համարվում է ընդհատված, քանի վոր այդպիսի դեմքերում դատարանը պետք է կամ գործը քննության առնի, կամ հանձնի համապատասխան դատարանին քննության առնելու համար: Այլ կերպ է լուծվում հարցն այն գեղագիտում, յերբ Հայցայիմումը հանձնված է վոչ համապատասխան դատարանին և վերջինս այն իր վարություն չի ընդունել, ինչպիսն այն դեպքերում, յերբ զիմումը արված և վարչական մարմնին կամ հասարակական կազմակերպությանը, որինակ, արհմիությանը: Այդ դեպքերում Հայցային վաղեմության ժամկետը չի ընդհատվում, բայց Հայցավորը կարող է խնդրել դատարանին վերականգնելու բաց թողած ժամկետը, ընդունելու այն հարգելի պատճառների առկայությունը, վորոնց հետևանքով բաց և թողնվել ժամկետը: Այդ Հարցը դատարանը լուծում է, յենելով դործի կոնկրետ հանդամանքներից, ընդլուրում, դատարանը հաշվի յեւ առնում Հայցվորի անդրապիստությունը, իրավաբանական անտեղյակությունը և այլ հանդամանքներ (ՌևֆՍՀ Քաղ. Դատ. Որ. 5 հոդվածը):

Առանց որենքով սահմանված սրահանջների պահպանության, դատարանին հայցադիմում տալու գեղագում, մասնավորապես առանց պետական միասնական տուրքի վճարման, դատարանը հայցադիմումը թողնում է առանց ընթացքի և այլ մասին հաղորդում և հայցվորին և ժամկետ և տալիս նրան՝ Հայցի թերություններն ուղղելու համար: Յեթե դատարանի կողմից սահմանված ժամկետում հայցադիմումի թերությունները չեն վերացվում, զիմումը համարվում է դատարանին չարչած քաղաքաց: (ՌևֆՍՀ Քաղ. Դատ. Որ. 81 հոդ. և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որենագիրի համապատասխան հոդվածները): Այսուղից հետեւում է, վոր Հայցադիմում տալու որը համարվում է վոչ թե թերությունների ուղղման որը, այլ զիմումը փաստորեն դատարանին հանձնելու որը, թեկուղ և այն անշարժ մեա դատարանում յերկար ժամանակ (մեկ ամիս և ավելի): Յեթե զա յեղել և նույնիսկ Հայցային վաղեմության վերջին որը, այնուամենայնիվ համարվում է, վոր ժամկետը խախտված է: Յեթե Հայցադիմումի թերությունները չեն վերացվում դատարանի կողմից սահմանված ժամկետում, ապա դիմումը համարվում է չարչած և Հայցային վաղեմության ժամկետը չխախտված:

Վերջապես, հարկավոր է քննության առնել զործի վարույթը ՌևֆՍՀ Քաղ. Դատ. Որ. 114 հոդվածներով և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան հոդվածներով կասեցնելու հետ կապված: Հարցերը: Ինչպես արգեն ասվեց, Հայցային վաղեմությունն ընդհատվում և Հայցի հարուցմանը, սակայն, զործի վարույթը կասեցնելու դեմքում, վարույթի այդպիսի կասեցումը չի կարող շարունակել անվերջ, որա համար ել վարույթը պետք է նորոգվի իրավահարաբերությունների ավյալ տեսակի համար սահմանված վաղեմության ժամկետի ընթացքում, վարույթն այդ ժամկետի ընթացքում չնորոգվելու դեմքում, Հայցի իրավունքը մարգում և վաղեմությամբ: Խոկ վո՞ր մոմենտից և սկավում Հայցային վաղեմության նոր ժամկետը:

Յեթե զործի վարույթը կասեցվում և ա) կողմերից

մեկի մահվան հետեւանքով, բ) կողմերից մեկի վրա խնամակալություն նշանակելու կամ գտառարանում հայց հարուցելու և պատասխանելու իրավունքի այլ սահմանափակման անհրաժեշտության դեպքում կամ դ) գործում կողմ հանդիսացող հիմնարկի, ձեռնարկության, կոլտնտեսության, կոռպերատիվ կամ այլ հասարակական կազմակերպության (իրավական անձի) գոյսությունը դադարելու հետեւնքով՝ ապա վաղեմության նոր ժամկետն սկսվում և գործի վարույթը կասեցնելու մոմենտից:

Յեթե գործի վարույթը կասեցվում և կողմերից մեկի՝ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կամ Ռազմա-Ծովային Նավատորմի գործող զորամասը կանչվելու հետեւնքով (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 113 Հոդվածը), ապա Հայցային վաղեմության նոր ժամկետն սկսվում և կողմի՝ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կամ Ռազմա-Ծովային Նավատորմի գործող մասից զուրս գալու մոմենտից (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 116 Հոդվածը):

Կողմերից մեկին ընդհանուր զինվորական պարտականության զինակոչելու կամ այլ վորեե պարտադիր պարհակ կատարելու համար, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կամ Ռազմա-Ծովային Նավատորմ կանչվելու հետեւնքով դործի վարույթը կասեցվելու դեպքում (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 114 Հոդվածը), Հայցային վաղեմության նոր ժամկետն սկսվում և կողմի՝ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակից կամ Ռազմա-Ծովային Նավատորմից զուրս գալու մոմենտից, կամ պարտադիր պարհակի կատարումը սվարտելուց հետո :

Գործի վարույթը կասեցվում և նաև այն դեպքում, յերբ տվյալ գործը չի կարող լուծումն ստանալ մի այլ գործի լուծվելուց առաջ, վորը պետք է քննության առնավի քաղաքացիական, քրեական իրամ վարչական կարգով: Նման դեպքերում Հայցային վաղեմության նոր ժամկետն սկսվում և այլ գործով վճիռը կամ դատավճիռն որինական ուժի մեջ ժամկելու կամ վարչական մարմնի կողմից վորոշում կայացնելու որից:

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որենսդիրքը և մյուս միութենա-

կան հանրապետությունների քաղ. դատ. որենսդրքերից մի քանիսը վարույթի կասեցում թույլ են տալիս նաև կողմերի համաձայնությամբ, ընդվորում, որենքը տահմանում և, փոր յեթե վարույթը կողմերի միջնորդությամբ չի նորոգվել վարույթը կասեցնելու որից վեց ամսվա ընթացքում, ապա գործի վարույթը համարվում և կարճված: Այդ դեպքում հայցվորին իրավունք և վերապահվում նույն գործով, Հայցային վաղեմության սահմաններում, նոր Հայց հարուցելու: Այդպիսով, այս դեպքում հայցի հարուցումը չի ընդհատում Հայցային վաղեմության ժամկետը, և այն հաշվում և հայց հարուցելու իրավունքն սկսվելու մոմենտից: Հայց հարուցելը Հայցային վաղեմության ժամկետը չի ընդհատում նաև այն դեպքում, յեթե գործի վարույթը կարծվում և ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 100 Հոդվածով և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապատասխան Հոդվածներով:

Հայցային վաղեմության ժամկետն ընդհատող յերկրորդ հանդամանքը հանդիսանում և պարտքի ընդունումը: ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 50 Հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. Համապատասխան Հոդվածների համաձայն, Հայցային վաղեմությունն ընդհատվում և նաև պարտապանի կողմից այնպիսի դործողություններ կատարելու դեպքում, վորոնք վկայում են պարտքը ընդուննելու մասին: Այդ գործողություններին են վերաբերում, որինակ, պարտքի մեկ մասի վճարումը, պայշմանադրով նախատեսված տուժանքի վճարումը, ի ապահովումն պահանջի իրավունքի՝ յերաշխավորություն կամ գրավ սահմաննելը, պարտապանի խնդիրը՝ վճարումը հետաձգելու մասին և այլն: Ինքնըստինքան հասկանալի յե, վորայդպիսի գործողություններին են վերաբերում պարտքի ուղղակի ընդունումը, վորը արտահայտված է լինում նամակում կամ բանավոր, վկաների ներկայությամբ, կամ թե պարտքի հաստատումը մի վորեե այլ ձեռվի: Այս կանոնը կիրառելի յե միայն այն դեպքերում, յերբ վիճող կողմերից թեկուղ մեկը քաղաքացի յե հանդիսանում, իսկ պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնտեսություննե-

ըի, կոռալերատիվ և հասարամկական այլ կազմակերպությունների միջև ծաղրղ վեճերով պարագաղացան կազմակերպությունների կողմից այնպիսի գործողություններ կատարելը, վորոնք վկայում են պարագն ընդունելու մասին, հիմք չեն ծառայում հայցային վաղեմության ժամկետների ընդհատման համար :

Որենքի այդ վորոշումը նպատակ ունի ապահովելու Փինանսական կարգապահության խստադույն պահպանումը սոցիալիստական տնտեսության մեջ : Նա ուղղված է, մասնավորապես, մեկ տնտեսական մարմին մեկ ուրիշի կողմից վարկավորելն արգելող որենքը խախտելու փորձերի գեմ (ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1930 թ. հունվարի 30-ի վորոշումը վարկային ռեֆորմի մասին) :

Հայցային վաղեմության ընդհատումը դատարանի վրանի կատարման պրոցեսում : ԱԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 255՝ Հոդվածի և մյուռ միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. համապատասխան հոդվածների համաձայն, վճրաների կատարման համար սահմանված է մեկ տարիա ժամկետ՝ պետական հիմնարկների, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների միջև ծաղրղ բոլոր վեճերով և յերեք տարիա ժամկետ՝ մնացած բոլոր դեպքերում : Այդ ժամկետները հաշվվում են վճիռն որինական ուժի մեջ մտնելու որից կամ փաստաթուղթը հարկադիր կատարման համար հանձնելու մոմենտից (կատարողական մակադրություններ և այլն) :

ԱԽՖՍՀ Գերագույն Դատարանը պարզաբանել է (Պինումի 1929 թ. փետրվարի 4-ի վորոշումը, արձանագրություն № 4, ԱԽՖՍՀ Քաղ. Որ. 50 Հոդվածի հավելվածը), վոր կատարման թերթը դատական կատարածուին ներկայացնելը ընդհատում է կատարողական թերթի վաղեմության ժամկետի ընթացքը : Յեթե դատական կատարածուն գանձման վարույթը կասեցրել է կամ կարծել է պարտապանին չգտնելու հետեւանքով, վորի վրա կարելի յեր դանձումը դարձվել, առավաղեմության նոր ժամկետը համապահանը պահպանության մեջ անհրաժեշտ կարդն ապահովելու նոպատակով, վորի հետեւանքով կողմերին իրավունք վերապահելը՝ իրենց հայեցողությամբ փոփոխելու այդ ժամկետները, կհակասեր այդ ինստիտուտի հիմնական նպատակին և բովանդակությանը : Առանձին գեղեցերում որենքը յերբեմն թույլ ե տալիս վաղեմության ժամկետի փոփոխությունը կողմերի համաձայնությամբ : ԱԽՖՍՀ Քաղ. Որ. 197 Հոդվածը և մյուռ միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր դնված գույքի պակասությունների առթիվ զնորդի կողմից հայտարարություն անելու համար այդ Հոդվածով նախատեսված բոլոր ժամկետները կարող են յերկարացվել կողմերի համաձայնությամբ : Նույնպիսի կանոն սահմանված է նաև

կողմից դատական կատարածուի ծանուցումն ստանալու ժամենատից : Վաղեմության նոր ժամկետի ընթացքում պահանջատերը կարող է նորից դիմել դատական կատարածուին, ցույց տալով պարտապահնի կամ նրա այն գույքի գտնվելու վայրը, վորի վրա կարելի յէ դարձնել դանձումը : Այդպիսի դիմումը նորից ընդհատում է հայցային վաղեմությունը :

ԳԼՈՒԽ V

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԽՖՍՀ Գերագույն Դատարանի պլենումն իր 1925 թ. նոյեմբերի 16-ի վորոշմամբ (ԱԽՖՍՀ Քաղ. Որ. 44 Հոդվածի լրացումը) պարզաբանել է, վոր հայցային վաղեմության ժամկետները չեն կարող փոփոխվել կողմերի համաձայնությամբ, այսինքն՝ նրանք չեն կարող վոչ յերկարացվել, վոչ կրծատվել : Գերագույն Դատարանի այդ վորոշումը յենում է այն դրությունից, վոր հայցային վաղեմության ժամկետներն որենքով սահմանված են քաղաքացիական իրավունքների պատշաճ պահպանության համար և քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ անհրաժեշտ կարդն ապահովելու նոպատակով, վորի հետեւանքով կողմերին իրավունք վերապահելը՝ իրենց հայեցողությամբ փոփոխելու այդ ժամկետները, կհակասեր այդ ինստիտուտի հիմնական նպատակին և բովանդակությանը : Առանձին գեղեցերում որենքը յերբեմն թույլ ե տալիս վաղեմության ժամկետի փոփոխությունը կողմերի համաձայնությամբ : ԱԽՖՍՀ Քաղ. Որ. 197 Հոդվածը և մյուռ միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր դնված գույքի պակասությունների առթիվ զնորդի կողմից հայտարարություն անելու համար այդ Հոդվածով նախատեսված բոլոր ժամկետները կարող են յերկարացվել կողմերի համաձայնությամբ : Նույնպիսի կանոն սահմանված է նաև

Քաղ. Որ. 229 Հոդվածով : Այդ գեղքերում որենքը թույլ է տալիս միայն ժամկետի յերկարացում , հետևապես նրանք չեն կարող կրծատվել :

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԲԱՅ ԹՈՂԱԾ ԺԱՄԿԵՏԻ ՅԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ

Բացի հայցի վաղեմության ժամկետի ընդհատման և կասեցման դեպքերից , կարող են լինել նաև այլ գեղքեր , վորոնք արդելք են հանդիսանում հայցը ժամանակին հարուցելուն : Որենքն իրավունք ե վերապահում դատարանին բոլոր այն գեղքերում , յերբ նա կպարզի , վոր հայցային վաղեմության ժամկետը հայցվորի կողմից բաց ե թողնվել հիմնավոր պատճառներով—յերկարացնել այդ ժամկետը (Քաղ. Որ. 49 Հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ . համապատասխան Հոդվածները) : Որենքը չի թվում այն հանդամանքները , վորոնք կարող են հիմնական համարվել , քանի վոր այդ անելն անհնար ե : Կյանքը բաղմակողմանի և բաղմաղան ե : Այն հանդամանքը , վորը մի գեղքում խանդարում եր հայցը ժամանակին հարուցելուն , մի այլ գեղքում կարող ե չխանդարել դրան : Որինակ , յեթե վերցնենք հիվանդությունը , ապա այն ևո թիշտ չի կարող հիմք ծառայել հայցային վաղեմության ժամկետը յերկարացնելու համար : Այդ պատճառով՝ որենքն իրավունք ե վերապահում դատարանին , յուրաքանչյուր առանձին գեղքում , յենելով գործի կոնկրետ հանդամանքներից , պարզելու , թե արդյոք առկա յե մի հանդամանք , վորն որյեկտիվորեն արգելք ե հանդիսացել հայցը ժամանակին հարուցելուն , և դրանից յենելով լուծելու հայցային վաղեմության ժամկետը յերկարացնելու հարցը :

ՈՒՖՍՀ Գերագույն Դատարանի պլենումն իր մի շարք պարզաբանումներով գտել ե , վոր Քաղ. Որ. 49 Հոդվածում շարադրված՝ հայցային վաղեմության ժամկետը յերկարացնելու վերաբերյալ կանոնը կիրառելի յե միայն հայ-

ցային վաղեմության ընդհանոր ժամկետների նկատմամբ և չի կարող կիրառվել հայցային վաղեմության հատուկ ժամկետների նկատմամբ , յեթե որենքում այլ բան չի սահմանված (տես 1925 թ. նոյեմբերի 16-ի և 1927 թ. հունիսի 4-ի վորոշումները և ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 49 և 50 Հոդվածների հավելվածները , հրատ. 1938 թ.) : Դրա հետ միասին ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանն ընդունել է , վոր բացառիկ գեղքերում գատարանը կարող ե Քաղ. Դատ. Որ. 62 և 68 Հոդվածների կարգով վերականգնել հայցադիմում տալու ժամկետը , յեթե հայց հարուցելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարի (Պլենումի 1925 թ. նոյեմբերի 16-ի վորոշումը) :

ԳԼՈՒԽ VII

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԲԱՅ ԹՈՂԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայցային վաղեմության ժամկետի լրանալը մարում ե հայցի իրավունքը , այսինքն՝ անհնար ե դարձնում իրավունքի հարկադրական իրադործումը : Հայցային վաղեմության ժամկետը բաց թողած պարտադրելը չի կարող իրադորել իր իրավունքը գատարան կարգով , չի կարող նաև պարտքն ստանալ հաշվակցելու կարգով : Սակայն պարտապանն իր պարտավորությունը կարող ե կատարել նաև հայցային վաղեմության ժամկետն անցնելուց հետո : Պարտագրության այդպիսի կատարում կարող ե տեղի ունենալ յերկու գեղքում՝ այն գեղքում , յերբ պարտապանը գիտեր հայցային վաղեմության ժամկետը լրանալու մասին , և այն գեղքում , յերբ նա վճարումը կատարելու պահին չգիտեր այդ մասին : Առաջին գեղքում պարտապանը գործում ե գիտակցորեն , զիտե , վոր պարտադրելը չի կարողադրել իրեն վճարելու պարտապանը բարեկարգության վաղեմության ժամկետը յերկարացնելու հարցը :

զեմության ժամկետն արդեն լրացել է, ապա կարո՞ղ չ նա, արդյոք, հետագայում տեղեկանալով այդ ժամին, իր վճարումը հետ պահանջել. ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 47 հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ համապատասխան հոդվածների հիման վրա պարտապահն այդ դեպքում վճարած հետ պահանջել չի կարող: Այդպիսով, պարտքի վճարումը հայցային վաղեմության ժամկետն անցնելուց հետո ևս դիտվում է վորաքս պարտավորության կատարում և վոչ վորաքս չեղած պարտքի վճարում:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, յերբ կողմերի միջև գոյություն են ունենում մի քանի պարտավորություններ, կարգած մեկը մյուսի հետ, վորոնցից մեկը հանդիսանում է զլիսավորը, իսկ մյուսը կցորդը: Այսպես, որինակ, պարտապահն ըստ փոխադրի պարտավոր և վճարել 500 ռուբլի և այդ գումարից տոկոսները: Գլխավոր պահանջը կլինի պարտքի մայր գումարը՝ 500 ռուբլին վերադառնելը, իսկ կցորդ պահանջը՝ տոկոսների վճարումը: Կցորդ պահանջ կլինի նաև այս կամ այն պայմանագրով պարտավորություններ չկատարելու համար սահմանված տուժանքի, տույժի և այն վճարելու վերաբերյալ պահանջը: ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 46 հոդվածը և մյուս միութենական հանրապետությունների քաղ. որ. համապատասխան հոդվածները սահմանում են, վոր զլիսավոր պահանջի վերաբերմամբ հայցային վաղեմության ժամկետն անցնելու հետ միաժամանակ, հայցի իրավունքը մարդում և վոչ միայն զլիսավոր, այլև կցորդ պահանջների վերաբերմամբ: Այսպես, որինակ, յեթև անցել ե ապրանք մատակարարելու պայմանագրից բղխող պահանջի ժամկետը, ապա մարդում և նաև այդ պարմանաղբով նախատեսված տուժանքը դանձելու վերաբերյալ հայցի իրավունքը, թեկուղ և տուժանքը վճարելու պահանջի հայցային վաղեմության ժամկետը զենքուս անցած չլինի:

Մենք մինչև այստեղ շարադրեցինք հայցային վաղեմության ժամկետն անցնելու հետեանքները՝ պարտավորական հարաբերություններից ծաղող պահանջների համար: Այլ և լինում դրությունը, յերբ վեճը վերաբերում է սեփականության իրավունքին:

Քանի վոր ԽՍՀՄ-ում ձեռքբերման վաղեմություն չկա, ապա ուրիշի իրին տիրապետող անձը սեփականության իրավունք ձեռք չի բերում, յեթև սեփականատերը հայցի իրավունքը կորցրել է հայցային վաղեմության ժամկետն անցնելու հետեանքով: Այդպիսի գեղքերում, համաձայն ՌԽՖՍՀ Գերազույն Դատարանի ոլլենումի 1925 թ. Հունիսի 29-ի պարզաբանման (ՌԽՖՍՀ Քաղ. Որ. 44 հոդվածի հավելվածը, հրատ. 1938 թ.), իրը համարվում է տիրապետի Քաղ. Որ. 68 հոդվածի իմաստով և անցնում է սեփականությանը:

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԻՐԱԾՈՒՄԸ

Հայցային վաղեմությունն որենքը սահմանել է հոգուտքաղաքացիական իրավունքների պատշաճ պաշտպանության և անձնական ու գույքային իրավական հարաբերությունների մեջ համապատասխան կարգ պահանջնելու նպատակով: Դրանից հետեւում է այն, վոր նրա կիրավման հարցը չի կարող կախված լինել պատասխանողի ցանկությունից: Բուրժուական դատարանում վաղեմության ժամկետները կիրավություն են միայն պատասխանողի հայտարարությամբ: Յեթև պատասխանողը դատարանում չհայտարարեց հայցվորի կողմից հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու մասին, ապա դատարանն ինքը, իր նախաձեռնությամբ, չի կարող մերժել հայցը, թեկուղ և նա գործի հանդամանքներից յեկած լինի այն համոզման, վոր այդ ժամկետը բաց և թողնված: Այլ և գրությունը խորհրդային գատարանում: Անկախ նրանից՝ պատասխանողը հիմնվում է հայցային վաղեմության ժամկետի վրա թե վոչ, դատարանը պարտավոր և բոլոր գեղքերում, իր նախաձեռնությամբ, այդ հարցը պրոցեսի ժամանակ կողմերի քննության զնել և ըստ այնմ վճիռ կայացնել:

Այս կանոնի կապակցությամբ հարց և ծագում, թե ինչպես պետք է վարդի դատարանն այն գեղքում, յերբ

պատասխանողը միջնորդություն եւ հարուցում վեճն ըստ
եյության քննելու մասին, թեև հայցվորը, հայցային վա-
ղեմության ժամկետն անցնելու հետևանքով, կորցրել է
հայցի իրավունքը: Պետք եւ ընդունել, վոր դատարանը
պարտավոր եւ դործն ըստ եյության քննել, քանի վոր այդ
գեղքում պատասխանողը շահագրդոված եւ վոչ միայն նրա-
նում, վորպեսզի աղատվի վճարում կատարելու անհրաժեշ-
տությունից, այլև նրանում, վորպեսզի դատական վճռի
միջոցով հաստատի, վոր հայցվորի համար հայցի իրա-
վունքը չի ել ծաղել, վոր ինքը պատասխանողը հայցվո-
րի նկատմամբ վոչ մի պարտավորություն չի ունեցել:
Առհերթային քաղաքացու պատվի և արժանապատվության
պահպանությունը պահանջում ե, վորպեսզի դատարանը
պատասխանողի պահանջով պարզի կողմերի խիստական փոխ-
հարաբերություններն ու հաստատի, յեթե այդ կհամապա-
տասխանի գործի փաստական հանդամանքներին, վոր նա,
պատասխանողը, չի վճարում վոչ թե նրա համար, վոր
ողակել ե հայցվորի անձշտապահությունից, անփութու-
թյունից, այլ նրա համար, վոր այդպիսի պարաւորու-
թյուն նա իր վրա չի վերցրել: Համանման յենթադրու-
թյունները բերում են նույն հետևությանը նաև այն դեպ-
քերում, յերբ վեճը տեղի եւ ունենում սոցիալիստական տըն-
տեսության կազմակերպությունների միջև:

Գ Լ Ո Ւ Խ IX

ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՅԵՐԿԱՐԱՅՆԵԼՈՒ
ՅԵՎ ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՎԵՐԱԿԱՌԱԳ-
ՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ինչպես արդեն ցույց տրվեց, հայցային վաղեմության
ժամկետն անցնելու հետ միասին մարդում եւ հայցի իրա-
վունքը, այսինքն՝ իրավունքի իրագործումը հարկադիր
կարգով դառնում ե անհնար: Սակայն այդ գետ չի նշանա-
կում, վոր դատարանում անհնար ե հայց հարուցել, քանի
վոր այդ գեղքերում հայց հարուցելու իրավունքը չի կոր-

չում: Դրա համար ել սխալ պետք ե համարել մի քանի դա-
տավորների պրակտիկան, վորոնք հրաժարվում են հայցա-
դիմում ընդունելուց՝ հայցային վաղեմության ժամկետը
բաց թողնված լինելու պատճառով: Այդ պրակտիկան նախ
հակասում ե ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 31 Հոդվածին ե
մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ.
որ. Համապատասխան Հոդվածներին, վորոնց համաձայն
դատարանը կարող է հայցադիմումը ըլմոդունել միայն այն
դորձերով, վորոնք ընդհանրապես ընդդատյա չեն դատարա-
նին կամ ալյալ դատարանին. յերկրորդ՝ այդ պրակտիկան
սխալ ե նաև նրա համար, վոր բուն հարցն այն մասին, թե
արդյոք անցել ե վաղեմության ժամկետը, թե վոչ, բոլոր
դեպքերում անվիճելի չի համարվում: Դատավորը դանում
է, վոր ժամկետն անցել է, իսկ հայցվորը կարող է վիճար-
կել դատավորի այդ կարծիքը, իսկ ապացուցել նա կարող
ե միայն դատական նիստում, որինակ, ներկայացնելով
ապացուցյան վաղեմության ժամկետի ընդհատման կամ
կառեցման մասին: Վերջապես, հայցվորը համոզվելով հայ-
ցային վաղեմության ժամկետի լրանալու մեջ, կարող է
միջնորդություն հարուցել այն յերկարացնելու (ՌԽՖՍՀ
Քաղ. Որ. 49 Հոդվածը) կամ հայց հարուցելու ժամկետը
վերականգնելու մասին (ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 62 և 63
Հոդվածները):

ՌԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 5 Հոդվածի ե մյուս միութե-
նական հանրապետությունների քաղ. դատ. որ. Համապա-
տասխան Հոդվածների հիման վրա, դատարանը վորոշ հան-
դամանքներում պետք ե նախաձեռնություն ցուցաբերի և
հարց դնի հայցային վաղեմության ժամկետը յերկարացնե-
լու մասին, թեկուզ և կողմն այդ մասին խնդրած չլինի:

Այս ամենից հետեւում ե, վոր հայցային վաղեմության
ժամկետը յերկարացնելու և հայց հարուցելու ժամկետը
վերականգնելու հարցերը կարող են քննության առնվել մի-
այն դատական նիստում (և վոչ դատավորի կողմից մի-
անձնյա) պարտադիր կերպով տեղեկացնելով կողմերին: Պատասխանողը կարող է հայցվորի խնդրի հիմնավորված
լինել հերքող ապացուցյաներ ներկայացնել:

ՈԽՖՍՀ Քաղ. Որ. 49 հոդվածի հիման վրա, հայցային վաղեմության ժամկետը յերկարացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է քննության առնվի գործն ըստ եյության քննելու հետ միաժամանակ: Յեթե դատարանը հետարավոր և դանում յերկարացնել ժամկետը, ապա նա գործը քննության և առնում ըստ եյության և՝ նայած գործի հանդամանքներին, բավարարում և հայցապահանջները կամ մերժում ե: Իսկ յեթե դատարանը հիմք չի դըտնում ժամկետը յերկարացնելու համար, ապա նա վճիռ և կայացնում հայցը մերժելու մասին՝ հայցային վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

Այլ կերպ ե դրվում հարցը, յերբ հայցվորը խնդրում և Քաղ. Դատ. Որ. 62 և 63 հոդվածների կարգով հայց հարուցելու ժամկետը վերականգնելու մասին. դա ինքնուրույն հարց է:

ՈԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 64 հոդվածի և մյուս միութենական հանրապետությունների քաղ. դատ. որ. համապատասխան հոդվածների համաձայն հայց հարուցելու ժամկետը վերականգնելու վերաբերյալ խնդիրը պետք է հարուցվի հայցադիմումը տալու հետ միաժամանակ, սակայն դատարանը դատական նիստի քննության և դնում սկզբում միայն մեկ հարց՝ հայցադիմումն ընդունելու հարցը: Այդ դեպքում դատարանը վորոշում է կայացնում հայցվորի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին: Աւագին դեպքում հայցադիմումն ընդունվում է վարություն, և գործի հետապա շարժումն ու նրա քննությունը կատարվում է սովորական կարգով: Յերկրորդ դեպքում դատարանը հայցադիմումը վերագրարձնում է հայցվորին:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այն հայցվորը, վորի միջնորդությունը՝ հայցը հարուցելու ժամկետը վերականգնելու մասին՝ մերժված է, կարող է դատարանի վորոշումը դանդատարկել վերագրա դատարանին (ՈԽՖՍՀ Քաղ. Դատ. Որ. 249 հոդվածը), քանի վոր այդպիսի մերժումը արգելակում է գործի հետապա շարժման հնարավորությունը: Իսկ հայցվորի միջնորդությունը՝ բավարարելու դեպքում, պատասխանողը չի կարող դատարանի այդ վո-

րոշումը դանդատարկել վերադաս դատարանին մինչև ըստ եյության վճիռ կայացնելը, բայց վճիռի դեմ իր տված դանդատի մեջ պատասխանողը կարող է մասնավորապես նշել հայց հարուցելու ժամկետը վերականգնելու վերաբերյալ վորոշման հիմնավորված չենելու մասին, և այդ հանգամանքը կարող է ամբողջ վճիռը բեկանելու հիմունքներից մեկը ծառայել:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Գլուխ I. Հայցային վաղեմության հասկացողությունը	3
Գլուխ II. Հայցային վաղեմության ժամկետները և դրանք հաշվե- լու կարգը	7
Գլուխ III. Հայցային վաղեմության կանցկացմը	17
Գլուխ IV. Հայցային վաղեմության ժամկետի ընդհատումը	19
Գլուխ V. Հայցային վաղեմության ժամկետների փոփոխությունը	25
Գլուխ VI. Հայցային վաղեմության բաց թողած ժամկետի յերկա- րացումը	26
Գլուխ VII. Հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու հե- տեւքները	27
Գլուխ VIII. Հայցային վաղեմության ժամկետի կիրառումը	29
Գլուխ IX. Հայցային վաղեմության ժամկետը յերկարացնելու և հայցադիմումը տալու ժամկետը վերականգնելու վերաբերյալ դիմումները դասարանի կողմից քննության տանելու կարգը . .	30

Թարգմ. Լ. Մորոզյան

Խմբագիրներ Ս. Մամյան և Ս. Մարտիրոսյան

Տեխ. խմբ. Ս. Խաչատրյան

Սբագրիչ Գ. Զիգուզյան

Կոնտրոլ սբագրիչ Լ. Արովյան


Քլավիոր լիազոր Վ. 1099, Պատվեր № 282, տիրամ 1000

Հանձնված և արտադրության 20/XII 1939 թ.

Ստորագրված և տպագրելու 28/II 1940 թ.

Քինը 70 կտ

Քաղաքական դրականության պետական հրատարակություններ
Ենթական, Ալլագվարդյան № 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0221254

ԳԻՒԲ 70 հ.

34/91

18261

Arm
Q-5731a

С. Н. АБРАМОВ
ИСКОВАЯ ДАВНОСТЬ

Издательство Наркомюста Арм. ССР.
Ереван, 1940